ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԾՁԲ-16/2 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով ՀՀ ՖՆ Դիլիջանի ուսումնական կենտրոնի վերակառուցման (6-րդ փուլ, 1-ին մաս) աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գահատող հանձնաժողովի նիստի ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի 17.02.2016թ. N 1/24-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 19.02.2016թ. ժամը 16-00-ին, ՀՀ ՖՆ վարչական շենքում, ք. Երևան, Մ. Ադամյան-1 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի անդամ՝ Հ.Մակարյանը, Է.Պողոսյանը, Դ.Շատվերյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

-ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԾՁԲ-16/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Հ.Մակարյանը տեղեկացրեց, որ ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԾՁԲ-16/2 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին մասնակցելու համար /17.02.2016թ. թիվ-1/18-2/5628-16 գրությամբ /միաժամանակյա ծանուցմամբ հրավեր էր ուղարկվել՝ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին, «Զանգված» ՍՊԸ-ին և «Բագարանի բարիք» ՓԲԸ-ին, ինչպես նաև հրավերը նույն օրը հրապարակել էր նաև www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:
-ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԾՁԲ-16/2 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.
1. «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն (ք.Սիսիան, գ.Տոլորս)
-քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:
-գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝
ա/ հայտ պարունակող ծրարը կազմված և ներկայացված է հրավերով սահմանված կարգով.
բ/ բացված ծրարում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և դրանք կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան.

Մասնակցի կողմից առաջարկված գինը հետևյալն է.
«Հուսալի Կամար» ՍՊԸ

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ
1	**ՀՀ ՖՆ Դիլիջանի ուսումնական կենտրոնի վերակառուցման (6-րդ փուլ, 1-ին մաս) աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություններ** 1. Երկրորդ մուտք /տարհանման ճանապարհ/ 2. Սպորտային մասնաշենքի բարեկարգում և հակասողանքային ինժեներական կառույցներ 3. Բացօթյա սպորտհրապարակների բարեկարգում 4. Լրացուցիչ աշխատանքներ 5. Սպորտային համալիրի մանկական ֆուտբոլի դաշտի լուսավորություն 6. Սպորտդաշտերի էլ. լուսավորություն	1 332 000	7 992 000

-գնահատող հանձնաժողովը որոշեց՝
1. «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

-ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԾՁԲ-16/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ հրավերի պահանջներին բավարարող գնահատված հայտ ներկայացրած և նիստին ներկա «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի տնօրեն Վ.Առաքելյանին հրավիրեց մասնակցելու ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 74-րդ կետի 1-ին ենթակետի զ/ կետի պայմաններով բանակցությունների:

-Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն ներկայացրած գնային առաջարկը թողեց անփոփոխ:

-գնահատող հանձնաժողովը որոշեց

1.Ներկայացված հայտի հիման վրա և հաշվի առնելով, որ հիշյալ գնման ընթացակարգին «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը՝ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին հայտարարել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

2. Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հրավերի 2.1 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 10-00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Հ.Մակարյան

Է.Պողոսյան

Դ.Շատվերյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան